



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
(սոր խմբագրություն)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն
կենտրոն» հասարակական կազմակերպության
Ընդհանուր ժողովի կողմից

22 դեկտեմբերի 2021 թ.

Արձանագրություն թիվ 21/03

1. Սույն աշխատակարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Թրանսփարենսի Ինթեր-նեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) Էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) լիազորու-թյունների իրականացման, նիստեր հրավիրելու, որոշումների և եզրակացությունների ընդունման կարգը:
2. Հանձնաժողովի կանոնադրական իրավասություններն են՝
 - 1) հրավիրել նիստեր Կազմակերպության և/կամ աշխատակազմի ցանկացած անդամի գրավոր դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Կազմա-կերպության կայքէջի միջոցով քաղաքացիներից ստացված դիմում բողոքների, այդ թվում՝ անանուն հաղորդումների հիման վրա՝ Կազմակերպության անդամի, աշխատակ-ցի¹ և կամավորի կողմից Վարքագծի կանոնների և/կամ շահերի բախմանը ներկայաց-վող պահանջների խախտումների վերաբերյալ:
 - 2) ընդունել եզրակացություն Կազմակերպության անդամի, աշխատակցի և կամավորի կողմից Վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման իրավիճակներում գտնվելու վերաբերյալ կամ որոշում վարույթը կարճելու մասին:
 - 3) իրականացնել ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկություններ Կազմա-կերպության հտորհրդին և Գործադիր տնօրենին Կազմակերպության բարեվարքության միջավայրի գնահատման, Վարքագծի կանոնների, շահերի բախման իրավիճակների պահանջների պահպանման վերաբերյալ, աշխատակազմի և կամ հրավիրված մասնագետների աջակցությամբ՝ ըստ անհրաժեշտության: Ուսումնասիրության համար կարող են կիրառվել անանուն հարցումների, վարքագծի կանոնների պահպանման չափորոշիչների, ինչպես նաև Կազմակերպության բարեվարքության խնդիրների լուծմանը միտված այլ գործիքներ:
 - 4) տրամադրել խորհրդատվություն և մեկնաբանություններ Կազմակերպության անդամ-ների, աշխատակիցներին և կամավորներին Վարքագծի կանոնների և շահերի բախ-ման իրավիճակների պահանջների պահպանման վերաբերյալ:
3. Հանձնաժողովը մշտապես գործող մարմին է, որը ձևավորվում է Ընդհանուր ժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով:
4. Հանձնաժողովը կազմված է երեք անդամից, որոնցից մեկը պարտադիր պետք է լինի Կազմակերպության աշխատակազմից: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանձնաժողովի կազմում:
5. Առաջադրվելու կամ ինքնառաջադրվելու միջոցով Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել Կազմակերպությանն առնվազն երկու տարի անդամակցող անձը, որն ընդ-գրկված չէ Կազմակերպության հտորհրդի կազմում և գործադիր մարմնում: Փակ գաղտ-նի քվեարկության արդյունքում ընտրվում են առավել շատ ձայներ հավաքած թեկնա-ծուները: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է վիճակահանություն:
6. Հանձնաժողովն իր կազմից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ՝ 3 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քանի իր լիազորությունների ժամկետի ավարտը:
7. Հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարել կամ դադարեցվել, եթե՝
 - 1) նա հրաժարականի մասին գրավոր դիմում է ներկայացրել,

¹ Աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում աշխատանք կատարող կամ ծառայու-թյուն մատուցող:

- 2) նա՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործու-
նակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած,
 - 3) նա երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է Հանձնաժողովի նիստերից,
 - 4) ի հայտ են եկել փաստեր, որ ընտրվելու պահին նա չի համապատասխանել Էթիկայի
հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջներին,
 - 5) Էթիկայի հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվել է նրա կողմից Կազմակեր-
պության Վարքագծի կանոնները կամ շահերի բախման պահանջները խախտելու
փաստը,
 - 6) նա մահացել է:
8. Հանձնաժողովի բնականոն գործունեությունը ապահովում է Հանձնաժողովի նախա-
գահը: Հանձնաժողովի նախագահը՝
- 1) նախապատրաստում և գումարում է Հանձնաժողովի հերթական և արտահերթ նիս-
տերը,
 - 2) վարում է Հանձնաժողովի նիստերը և ապահովում նիստերի արձանագրության կազ-
մումը,
 - 3) իրականացնում է Հանձնաժողովին ուղղված դիմումների նախնական ուսումնասի-
րություն,
 - 4) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի հերթական նիստի
օրակարգի նախագիծը,
 - 5) հետևում է Հանձնաժողովի եզրակացությունների/որոշումների կատարմանը,
 - 6) Հանձնաժողովին իրազեկում է ընդունված եզրակացությունների կատարման ընթաց-
քի մասին:
9. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա պաշտոնը թափուր լինելու դեպ-
քում սույն Կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված լիազորություններն իրականացնում է
Կազմակերպության Խորհրդի նախագահը:
10. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝
- 1) մասնակցել Հանձնաժողովի նիստերին անձամբ կամ առցանց՝ ուղիղ միացմամբ,
 - 2) հարգելի պատճառներով բացակայելու, ինչպես նաև մասնակցելու անհնարինության
դեպքում այդ մասին նախօրոք տեղյակ պահել Հանձնաժողովի նախագահին,
 - 3) կատարել Հանձնաժողովի որոշումները և Հանձնաժողովի նախագահի հանձնարա-
րականները,
 - 4) չիրապարակել իր լիազորությունների իրականացման բերումով իրեն հայտնի
դարձած՝ Կազմակերպության աշխատանքային և ծառայողական տեղեկությունն-
երը,
 - 5) ձեռնպահ մնալ Հանձնաժողովում քննվող հարցի վերաբերյալ մեկնաբանություննե-
րից մինչև Հանձնաժողովի եզրակացության հրապարակելը:
11. Հանձնաժողովի անդամը կարող է՝
- 1) առաջադրվել և ընտրվել Հանձնաժողովի նախագահ կամ նախագահի ժամանակա-
վոր փոխարինող,
 - 2) Հանձնաժողովի նիստերում ունենալ ելույթներ, տալ հարցեր և անել առաջարկու-
թյուններ,
 - 3) նշանակվել Հանձնաժողովի ներկայացուցիչ,
 - 4) ծանոթանալ Հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի:
12. Կազմակերպության անդամների, աշխատակիցների ու կամավորների կողմից Վար-

քազծի կանոնների խախտման և/կամ շահերի բախման, ինչպես նաև Վարքազծի կանոնների և/կամ շահերի բախման պահանջների վերաբերյալ մեկնաբանությունների և խորհրդատվության տրամադրման հիմքով Հանձնաժողովը հրավիրում է նիստ և հարուցում է վարույթ՝

- 1) Կազմակերպության և/կամ աշխատակազմի ցանկացած անդամի գրավոր դիմումի հիման վրա, որը կհասցեագրվի Հանձնաժողովի կամ Կազմակերպության էլեկտրոնային հասցեին,
 - 2) սեփական նախաձեռնությամբ,
 - 3) Կազմակերպության կամ Եթիկայի հանձնաժողովի էլեկտրոնային հասցեներին ուղղված քաղաքացիներից ստացված դիմում բողոքների, այդ թվում՝ անանուն հաղորդումների հիման վրա:
- 12.1 Կազմակերպության կայքէջի միջոցով քաղաքացիներից ստացված դիմում բողոքների, այդ թվում՝ անանուն հաղորդումների հիման վրա Հանձնաժողովը վարույթ է հարուցում, եթե հաղորդման տեքստում կոնկրետ նշված է Կազմակերպության անդամների, աշխատակիցների և կամավորների անունը, ազգանունը, նրա կողմից վարքազծի կանոնի կամ շահերի բախման իրավիճակների խախտման դեպքի նկարագրությունը և խախտումը վկայող հանգամանքներն ու փաստերը:
13. Հանձնաժողովի նախագահը՝ դիմումը ստանալու կամ նախաձեռնության պահից 5-օրյա ժամկետում Կազմակերպության աշխատակազմի աջակցությամբ հրավիրում է նիստ:
14. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե ներկա են Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
15. Հանձնաժողովի եզրակացությունները/որոշումները ընդունվում են պարզ մեծամասնությամբ և ստորագրվում Հանձնաժողովի անդամների կողմից: Հանձնաժողովի նիստին անդամներից որևէ մեկի հարգելի բացակայության դեպքում Հանձնաժողովի անդամին փոխարինում, նիստին մասնակցում և նրա փոխարեն քվեարկում է Կազմակերպության խորհրդի նախագահը: Հանձնաժողովի նիստին անդամներից երկուսի հարգելի բացակայության դեպքում հանձնաժողովի նիստը համարվում է չկայացած:
16. Նիստերի անցկացման վայրի, օրվա, ժամի, քննարկման ենթակա հարցերի մասին Հանձնաժողովը 3-օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին և այն անձին, ում վերաբերյալ ստացվել է դիմումը: Հանձնաժողովի նիստերին Հանձնաժողովի նախագահի որոշմամբ հրավիրվում են Կազմակերպության շահագրգիռ անձինք:
17. Վարույթն իրականացվում է հնարավորինս սեղմ, բայց ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում: Հանձնաժողովի հիմնավոր որոշմամբ՝ վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել ևս մեկ ամսով:
18. Հանձնաժողովն իրավասու է դիմումատուից պահանջել 10-օրյա ժամկետում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ Կազմակերպության համապատասխան անդամից (ու՛մ վերաբերյալ հարցն է քննարկվում)՝ գրավոր պարզաբանում՝ դրան կցելով իր փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:
19. Հանձնաժողովն ապահովում է բոլոր կողմերի լավելու իրավունքը՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ, բայց ոչ ուշ քան 10 օրում գրավոր բացատրություն ներկայացնելու համար: Եթե Հանձնաժողովի սահմանած ժամկետում անձը, որի վերաբերյալ քննարկվում է հարցը, չի ներկայացնում բացատրություն, ապա Հանձնաժողովը կարող է ընդունել եզրակացություն:
20. Հանձնաժողովի ընդունած եզրակացությունը չի սահմանափակում կազմակերպության անդամին խորհրդի նիստում, իսկ աշխատակիցներին ու կամավորներին՝ Գործադիր տնօրենին ներկայացնելու տվյալ հարցի վերաբերյալ կարծիք:

21. Եթե Հանձնաժողովում քննարկվում է Հանձնաժողովի անդամի կամ նրա հետ մերձավոր ազգակցությամբ և խնամփութությամբ կապված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) վերաբերյալ հարց, ապա տվյալ անդամը հարցի քննարկմանը և քվեարկությանը չի մասնակցում: Հանձնաժողովի այդ անդամի փոխարեն նիստին մասնակցում և քվեարկում է Կազմակերպության խորհրդի նախագահը:
22. Հարցի քննության արդյունքում Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝
- 1) եզրակացություն՝ Վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու և այդ իրավիճակում որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու փաստը հաստատելու մասին,
 - 2) եզրակացություն՝ Վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու փաստի բացակայության մասին,
 - 3) որոշում՝ վարույթը կարճելու մասին:
23. Հանձնաժողովի՝ Վարքագծի կանոնները խախտելու և/կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու և այդ իրավիճակում որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու փաստը հաստատելու կամ դրա բացակայության մասին եզրակացությունը կամ վարույթը կարճելու մասին որոշումը 3-օրյա ժամկետում գրավոր ուղարկվում է՝
- 1) դիմումատուին, շահագրգիռ անձին և խորհրդին՝ Կազմակերպության անդամի դեպքում,
 - 2) դիմումատուին, շահագրգիռ անձին և Գործադիր տնօրենին՝ Կազմակերպության աշխատակցի, կամավորի դեպքում:
24. Եթե Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է Կազմակերպության անդամի, աշխատակցի և կամավորի կողմից Վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման իրավիճակում գտնվելու և որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու փաստը, ապա Կազմակերպության խորհուրդը կամ Գործադիր տնօրենը քննարկում են տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը իրենց վերապահված իրավասությունների շրջանակում:
25. Եթե Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրվել է Կազմակերպության անդամի կողմից Վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման պահանջների խախտումների վերաբերյալ փաստը, ապա խորհուրդը առաջիկա նիստի օրակարգում ընդգրկում է տվյալ անդամի պատասխանատվության հարցը:
26. Եթե Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրվել է Կազմակերպության աշխատակցի կամ կամավորի կողմից վարքագծի կանոնների կամ շահերի բախման պահանջների խախտումների վերաբերյալ փաստը, ապա Կազմակերպության Գործադիր տնօրենը իր որոշմամբ կիրառում է կարգապահական պատասխանատվության միջոց:
27. Կազմակերպության անդամի, աշխատակցի կամ կամավորի կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման պահանջների խախտումների վերաբերյալ Կազմակերպության խորհրդի և Գործադիր տնօրենի որոշումների վերաբերյալ տեղեկատվությունն ուղարկվում է դիմումատուին, տվյալ անձին և Կազմակերպության անդամներին ու աշխատակիցներին:
28. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահպանվում են առնվազն տաս տարի Կազմակերպության գրասենյակում:

29. Սույն Կարգն ուժի մեջ է մտնում Կազմակերպության Ընդհանուր Ժողովի կողմից հաստատվելու պահից: